



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«**ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ**
ՆԱԽԱՐԱՐ»

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«23» 08 2016թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 71

Ձեռնարկողը՝

«Ապրիլում պրո Սփուդիո» ՍՊԸ
Ք. Երևան, Բաղրամյան 26գ

Գործունեությունը՝

**Սիս գյուղական համայնքի /բնակավայրի/
պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա
միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկրկություն**
«Արարարի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 71

«29» 08 2016թ.

**«Արարատի մարզի Սիս գյուղական համայնքի (բնակավայրի)
պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նազմավարական գնահատման հաշվետվություն»**

Ձեռնարկող՝ «Ատրիում պրո Ստուդիո» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրությային փաստաթուղթ

«Արարատի մարզի Սիս գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ կողմից՝ Սիս համայնքի պատվերով (Պայմանագիր N ԱՄԱՀ ԱՇԶԲ 15-02):

Պարզեցված գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը բնակավայրի հեռանկարային տնտեսական զարգացման և տարածքային աճի ուղղությունների, տարածքների ֆունկցիոնալ նշանակության կանխորոշումն է՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով:

Սիս համայնքը գտնվում է Արարատյան հարթավայրում, Մասիսի տարածաշրջանում՝ մարզկենտրոն Արտաշատ քաղաքից 26 կմ հեռավորության վրա, իսկ Երևանից՝ 13 կմ դեպի հարավ: Գյուղն ընկած է Հրազդան գետի աջ ափին, Միջինարաքսյան գոգավորությունում, ծովի մակարդակից 828 մ բարձրության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը բնութագրվում է հարավ-արևմտյան ուղղության փոքր թեքությամբ ռելիեֆով: Լճային նստվածքների հզորությունն այստեղ կազմում է 400 մ, ներկայացված են կոպճա-ավազա-ավազակավային գոյացումներով, որոնք ծածկված լճային կավերով: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ սպասվելիք առավելագույն հորիզոնական արագացումների արժեքը 0.4 g է, բալայնությունը՝ 9-րդ աստիճանի:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի ստորգետնյա ջրերը տեղադրված են մակերեսից 5մ խորության վրա, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Տարածաշրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային, տարվա տաք կեսը բնութագրվում է բարձր ջերմության և սակավ խոնավության պայմաններով (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C): Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Նման կլիմայական պայմաններին բնորոշ է անապատային և կիսաանապատային բնական լանդշաֆտները, որոնք ոռոգման արդյունքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Արարատ 1 գեոլոգիական ինստիտուտ

Սիս համայնքի բնակչության թվաքանակը ներկայումս կազմում է 1.599 հազ. մարդ, իսկ հաշվարկային ժամանակահատվածի համար ընդունվել է 2070 մարդ /համայնքի գլխավոր հատակագծի գործողության՝ 20 տարի կտրվածքով/ հաշվի առնելով բնակավայրի տարածական ռեսուրսային պոտենցիալը:

Գյուղը զբաղեցնում է 1249.28 հա տարածք, ունի 535 տնտեսություն. դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի հողերն օգտագործվում են որպես վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ: Գյուղացիական ընտանիքները Բնակչությունը զբաղվում է բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ, ինչպես նաև կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, ձկնաբուծությամբ:

Տարածքի համալիր գնահատականը տրվել է տեղանքի բնակլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ և համարվում է բարենպաստ: Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 1476 հա:

Սիս համայնքում մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում ավտոտրանսպորտը և ջեռուցման համակարգերը: Ներկայումս գյուղը գազիֆիկացված է 90%-ով: Գյուղի ջերմամատակարարումն իրականացվում է անհատական, ջեռուցման կենտրոնացված համակարգ գոյություն չունի: Մթնոլորտ արտանետումների ընդհանուր քանակը կազմում է 30.11տ/տարի: Ընդհանուր տնտեսական վնասը մթնոլորտի աղտոտումից կազմում է տարեկան ~3.27 մլն. դրամ մլն. դրամ:

Մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները չեն գերազանցում բնակելի գոտու համար սահմանված թույլատրելի նորմերը և օդային ավազանի վիճակով տարածքը գնահատվում է բարենպաստ:

Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է բնակավայրի տարածքում գործող՝ թվով 18 ինքնաշատրվանող արտեզյան հորատանցքերից, որոնք 2003 թ-ից անհատույց հանձնվել են «Մասիս» ԶՕԸ-ին: Հորատանցքերի որոշ մասեր անբարեկարգ են գլխամասային կառույցների միացումները հերմետիկ չեն, ինչը չի բացառում ջրի մեխանիկական աղտոտումը: Հորատանցքերից կառուցված ներքին ցանցն արդեն հնացած է և կարիք ունի վերակառուցման:

Ներկայումս Սիս համայնքը կոյուղացված չէ: Բնակչությունն օգտվում է հորատիպ զուգարաններից: Բնակչության տնտեսակենցաղային և առևտրային կազմակերպություններից հոսքաջրերն առանց մաքրվելու լցվում են մակերևութային ջրային ռեսուրսներ՝ Հրազդան գետ:

Գյուղում բացակայում է հեղեղատար կոյուղին, անձրևաջրերի արտահոսքն իրականացվում է անկանոն, բնական թեքության հաշվին՝ մեծ մասը ներծծվում է հողի մեջ, իսկ մնացած մասն անկանոն թափվում է Հրազդան գետ:

Համայնքում գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգումն իրականացվում է բետոնե կիսախողովակների և բաց առուների միջոցով՝ Արտաշատի ջրանցքից և Ազատի ջրամբարից: Որպես հաշվարկային ընդունված է երաշտ տարվա ոռոգման ռեժիմը՝ վեգետացիորեն շրջանում ջրի 95%-ի ապահովության պայմանը:

Համայնքի աղբահանությունն իրականացվում է գյուղապետարանի կողմից պայմանագրային կարգով, սահմանված ժամանակացույցով: Գյուղում արդյունաբերական ձեռնարկություններ չկան, այդ իսկ պատճառով արդյունաբերական թափոններ բացակայում են:

Համայնքի վարչական տարածքը նախագծով 1476.4 հա է, որից բնակավայրի հողերը կազմում են՝ 161.87 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 369.30 հա, արդյունաբերական ձեռնարկությունների զբաղեցրած հողատեսքերը /գյուղատնտեսական արտադրական/ 9.92 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ



ենթակառուցվածքների հողերը՝ 33.65 հա, ջրային հողերը՝ 899.32 հա և հատուկ պահպանվող տարածքների /պատմական և մշակութային/ հողերը՝ 2.35 հա (2015 թ. տվյալներով):

Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններն են՝ տրանսպորտային, ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործում /տր հանգույցների ստեղծմամբ/ և զարգացում, այգեգործության, դաշտավարության, անասնապահության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, բանջարաբուծության, ձկնաբուծության, թեթև արդյունաբերության և ռեկրեացիայի կազմակերպում: Համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված է հատուկ այդ նպատակի համար, գյուղի արևելյան հատվածում պահուստավորված տարածքը:

Հատակագծային կառուցվածքի կանոնակարգման նպատակով կատարվել են մի շարք հողատեսքերի նպատակային նշանակության փոփոխություններ, որը ներկայացվում է ստորև

Տարածքը		փաստացի	նախագծային
Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը	հա	1476.4	1476.4
ընդամենը, այդ թվում՝			
Բնակավայրի հողեր, որից.	հա	161.86	159.234
բնակելի կառուցապատման	- " -	124.15	126.517
հասարակական կառուցապատման	- " -	7.98	7.98
խառը կառուցապատման	- " -	-	-
Ընդհանուր օգտագործման հողեր, այդ թվում.	- " -	21.14	21.88
ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	- " -	-	0.74
Այլ հողեր	- " -	8.59	2.858
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	- " -	9.92	11.06
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից	- " -	33.65	27.586
Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	- " -	2.35	2.35
Բնապահպանական	- " -	-	-
Գյուղատնտեսական նշանակության հողեր	- " -	369.33	370.203
Անտառային հողեր	- " -	-	-
Ջրային հողեր	- " -	899.32	905.967
Պահուստային տարածքներ	- " -	-	-



Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների՝ ինչպես կենտրոնացած, այնպես էլ՝ ցրված տեղակայմամբ: Համայնքի բնակելի ֆոնդը ներկայացված է ցածրահարկ և երկհարկանի առանձնատներով:

Սիս համայնքում գյուղատնտեսության հողօգտագործման ինտենսիվությունը բարձրացնելու և ագրոարդյունաբերական համալիրի զարգացման նպատակով նպատակահարմար է փոքր ֆերմերային տնտեսությունների ստեղծումը՝ միավորելով և

խոշորացնելով մանր հողակտորները: Նշված միջոցառումները կնպաստեն նաև շրջանառությունից դուրս մնացած հողերի նպատակային նշանակությամբ օգտագործմանը:

Ագրոարդյունաբերական համալիրի արտադրանքի ստացումը (միս, յուղ, բանջարեղեն) կազմակերպելու և իրացնելու նպատակով կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների և ներդրողների համագործակցությունը, առաջնահերթ՝ տարածաշրջանային մեծածախ շուկայի ստեղծումով: Համայնքում առկա են գինու, պահածոների արտադրական հզորություններ:

Հեռանկարում նախատեսվող գործունեությունների արդյունքում մթնոլորտ վնասակար արտանետումները գրեթե բացակայում են և արտանետումների աղբյուրներ կհանդիսանան՝ արդյունաբերական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտը, ջեռուցման համակարգերը և ավտոտրանսպորտը /որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 94%-ը/: Հեռանկարում հասարակական շինությունները՝ դպրոցը, հիվանդանոցը կջեռուցվեն բացառապես բնական գազով, խոշորացված հաշվարկներով հեռանկարային տարեկան գազի պահանջարկը կկազմի մոտ 455.5 հազ.խմ: Ընդհանուր տնտեսական վնասը բոլոր տեսակ արտանետումներից հեռանկարում կկազմի տարեկան մոտ 3.81 մլն դրամ:

Մթնոլորտային օդի պահպանության նպատակներով որպես առաջնահերթ նախատեսվում են՝

- Արդյունաբերական ձեռնարկությունների ներդրմանը զուգընթաց տեխնոլոգիական հոսքագծերի և սանիտարա-տեխնիկական սարքավորումների արդիականացումը,
- մթնոլորտի աղտոտվածության դիտարկման և վերահսկման համակարգի կատարելագործումը,
- ճանապարհների ծածկույթի բարելավումը,
- ավտոմեքենաների տեխնիկական վիճակի, ինչպես նաև ծխագազերի չեզոքացման մուտքերի վրա վերահսկման ուժեղացումը և վառելանյութի որակի վերահսկումը,
- ավտոճանապարհների եզրագծով սանիտարապաշտպանիչ ծառատնկումների իրականացումը՝ ավտոտրանսպորտից վնասակար արտանետումների նվազեցման համար
- ձեռնարկություններում գազի այրման ռեժիմի բարելավումը և բարձր ՕԳԳ-ով ժամանակակից կաթսայատների գործարկումը:

Միս համայնքի հեռանկարային ջրապահանջը ընդհանուր՝ /հակահրդեհային, կենցաղային և արտադրական նպատակներով/ կկազմի մոտ 412 մ³/օր (8 լ/վրկ: Խմելու ջրամատակարարումը հեռանկարում հնարավոր կլինի իրականացնել Ռանչպարի աղբյուրներից (ջրհան կայանից) մեխանիկական եղանակով՝ դեպի Մասիս և Երևան քաղաք գնացող ջրատարից քանի որ բնակավայրը չունի համապատասխան տարածք (պահանջվող նիշով և մակերեսով)՝ օրվա կարգավորիչ ջրամբար (ՕԿՋ) նախատեսելու համար:

Ստորգետնյա ջրային ռեսուրսները աղտոտումից գերծ պահելու նպատակով սույն հատակագծով նախատեսվում է ամբողջովին կոյուղացնել համայնքը: Ըստ կատարված նախնական հաշվարկների՝ կենցաղային և արտադրական կեղտաջրերի միջին օրական քանակը կկազմի մոտ 352.4 մ³/օր, որի մաքրման համար նախատեսված է կենսաբանական կայան: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը դեպի նախատեսվող մաքրման կայան կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով, որոնք կմիացվեն գլխավոր կոլեկտորին, որի միջոցով հոսքաջրերը կտեղափոխվեն մաքրման կայան:

Նախագծով նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և ենթարկել մաքրման՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ: Կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, հեղեղատար ցանցերը կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի

կազմակերպված հեռացումը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սիս գյուղական համայնքում գործում են ձկնաբուծական տնտեսություններ, որտեղ ջուրն օգտագործվում է մանրածկների աճեցման լճակների լցման և լճակներում անհրաժեշտ ջրափոխանակության ապահովման համար:

Ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման միջոցառումների պլանավորման նպատակով առաջարկվում է՝

- հորատանցքների տեխնիկական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ նվազեցնելու ջրակորուստները և խնայելու ծախսվող ջրի ծավալները (փականային ռեժիմով աշխատանք),

- ձկնաբուծական տնտեսությունների համար ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաների, ինչպես նաև թույլատրելի սահմանային արտահոսքերի նախագծերի մշակում, որոնք ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից պետք է ստանան դրական եզրակացություն:

- արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման նվազեցման և կանխման միջոցառումների ծրագիր, ապահովելով նաև ՀՀ կառավարություն 31 մարտի 2016 թվականի N 338-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանի և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների>> դրույթների պահանջները:

- շրջադարձ ջրամատակարարման համակարգ ներդրում, ինչը թույլ կտա օգտագործված թարմ ջրի կուտակում և վերադարձ շրջադարձ ջրամատակարարման համակարգ:

Սիս բնակավայրում տնամերձերը և գյուղատնտեսական հողերը ներկա դրությամբ ոռոգվում են Հրազդան գետից սկիզբ առնող բետոնե հունով ջրանցքով և այլ ջրանցքներով: Հեռանկարում նախատեսվում է բարելավել նաև ոռոգման ցանցը՝ բետոնե կիսախողովակներով:

Ներկա իրավիճակում Սիս գյուղում արդյունաբերական թափոնները բացակայում են: Բնակչության աճի հետ մեկտեղ հեռանկարում կավելանա նաև կոշտ կենցաղային թափոնների քանակը՝ տարեկան կազմելով 400 տ:

Շրջակա միջավայրի վրա թափոնների վնասակար ազդեցության մեղմացման և կանխարգելման համար անհրաժեշտ է՝ կենցաղային թափոնների տեղափոխման շարժական և տեխնիկական սարքավորումների նորացումը, լքված աղբավայրում աղբի հարթեցման և հողով ծածկման աշխատանքների իրականացումը:

Գյուղն ունի մեկ գերեզմանատուն, որի ընդհանուր մակերեսը կազմում է 4.67 հա և բավարարում է բնակչության հեռանկարային պահանջը:

Հեռանկարում համայնքի զարգացման տեմպերի հետ հողի աղտոտման հիմնական աղբյուրներ կմնան գյուղմթերքների, վերամշակման ձեռնարկությունների մթնոլորտային արտանետումների ու կենցաղային թափոնների աղբավայրերը, հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում:

Հաշվի առնելով սույն հատակագծով ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները (արևափայլի բացառիկ երկարատևություն, տարեկան 2600 ժամ), որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է հեռանկարում դիտարկել արևի էներգիան՝ ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման ոլորտում:

Ներկա դրությամբ Սիս գյուղական համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) գոյություն չունեն, սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կազմում է 113.8 հա, որտեղ



բնակչության սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր: Հեռանկարային բնակչության պահանջը ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նկատմամբ կկազմի 0.74 հա, որի համար համայնքի արևելյան կողմով հոսող գետի ափին առանձնացվել է որոշակի հատված՝ որպես հանրային օգտագործման կանաչ գոտի: Այն կձառայի բնակչության ամենշաբաթյա հանգստի կազմակերպման համար:

Սիս գյուղական համայնքի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար առաջարկվել է գործողությունների համալիր ծրագիր, որը պարունակում են նոր տարածքների կանաչապատման, ոռոգման համակարգի զարգացման և բարելավման, կոշտ կենցաղային թափոններով աղտոտված տարածքների, խախտված լանդշաֆտով հողակտորների և սանիտարական գոտիների տարածքների մաքրման և վերականգնման և կանաչապատման միջոցառումները:

Սիս համայնքի գլխավոր հատակագծի կազմում ներառվել է բնակավայրի տարածքների գոտիավորման նախագիծը, որի դրույթները, պահանջները և նորմերը կանոնակարգում են կառուցապատման գործունեությունները, ինչը անմիջականորեն ազդում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, որոշում կառուցապատման խտությունը, հողամասերի օգտագործման ինտենսիվությունը և այլ գործոններ:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն, անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ատրիում պրո Ստուդիո» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Սիս գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:



[Handwritten signature]

Հ. Մկրտչյան